

Վերջին հասկերն ալ թռչունները տարին.
 Յոգնած եմ ես երգել զրկանքն հիւղերուն:
 Կ'ուզէի ես ապրիլ միայն տանջուելու
 Զոհեր պէտք են երջանկութեան մարդկային.
 Աս սիրտ չունիմ վաղանցուկ վարդ ժողվելու
 Պըսակելու մահուան ճակատը կրկին:
 Կ'ուզէի ես կեանքի կանչել մեռելներն
 Արծաթ փողով տալ աւետիս յարութեան.
 Սակայն մարդիկ կը հնձեն նոր ծաղիկներ
 Յոգնած եմ ես միշտ փոքելէ գերեզման:

Քեմիա, 8 Յունուար 1943

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ինչ որ քեզմէ դեռ պիտի գայ, կ'ընդունիմ ես
 Լուս, անտրտունջ, խորհուրդին դէմ ճակատագրիս.
 Կրնայ դեռ սիրտըս արիւնիլ ու գաղտնապէս
 Դեռ տանջուիլ կրնայ հոգիս...

Երբ աշունէն առաջ վարդերը թօշնեցան,
 Արտասուեցի երկնքին տակ անձրեւայոյզ.
 Ներէ՛ ինձի որ լսեց երգը մեղմաձայն
 Աղօթասաց իմ շրթներուս...

Հրաջերմ ձեռքերըս բարձրացան քու երկնքիդ
 Իրենց արտում որբութիւնովը սրկիհին՝
 Ուր դառնութիւն եղաւ գինին...

Տո՛ւր վերըստին այս աղբիւրին ականակիտ
 Որ իմ հոգիս էր ատենօք,
 Իր մրմունջները քաղցրօրէն սիրամորմոք...

ԻՄ ԱՐԱԳԱԾ, ԲԱՐԻ ԼՈՅՍ

Իմ Արագած, բարի լոյս,
 Հըրաշքի պէս կը յայտնուիս աչքերուս,
 Երազի մէջ տեսած էի քեզ արդէն,
 Ու մրմնջած էի աղօթք մ'իմ սրտէն,
 Սուրբ Արագած, բարի լոյս...

Քաղցրը շունչովդ կը պարուրես իմ հոգին,
 Իմ Արագած, բարի լոյս,
 Բոյրը կ'առնեմ հին մանկութեանըս խունկին,
 Եւ ջինջ աղօթք մը կը յառնէ շրթներուս,
 Սուրբ Արագած, բարի լոյս...

Առաւօտուն բարի լոյս,
 Եւ իրիկուան քրքումին մէջ վարդալոյս,
 Ու գիշերին աստղերուն տակ ոսկեշող,
 Իմ Արագած, քեզ դարձող
 Հէք պանդուխտին աչքի լոյս...

ՎԵՐԱԴԱՐՁ

Տուն պիտի գամ առաւօտուն, կամ իրիկուան
 Կըրակին հետ, ճամբու ծարաւըս անցուցած
 Կախարդահոս լեռան ջուրէն ոսկեւրման.

Տուն պիտի գամ ձեռքերըս բաց:

Պիտի գամ լուս, ու երբ շարժին իմ շրթներս,
 Անոնք միայն պիտի հծծեն աղօթասաց.
 Բու սուրբ կարօտըդ պահելով հոգիէս ներս՝
 Տուն պիտի գամ աչքերըս բաց:

Աչքերըս բաց արեւաշող քու ձըրագիդ,
 Ծուխիդ անշէջ հայրենավառ Ուրախութեան,
 Պիտի նստիմ սեմիդ վըրայ լուսաժապիտ՝
 Մայրը գտնող որբի նրման:

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՍՈՒՍԱՆԵՐՍ ԼՈԿ ԻՆՁ ՏՈՒՆ

Իմ անսրբա՛ղ սրտիս աւեր
 Պուտ մը սերն իսկ ա՛հ կը բաւեր,
 Բայց չունեցայ կաթիլ մը ջուր,
 Որ յագենար ծարաւըս հուր:

Մըթութեան մէջ փնտռեցի ես
 Ճառագայթ մը սոսկ լուսակէզ,
 Արեւն անգամ մարած գըտայ
 Երբ միայնակ մըտայ աշխարհ:

Ու զըլացան ինձ ամէն բան
 Եւ ամէն բան գըտայ խոտան,
 Իմ Մուսաներս լոկ ինձ տըւին
 Սերոյ, կեանքի անուշ գինին ...:

Ֆիլատելֆիա, 24 Ապրիլ 1944

ՄԱՅԸ ԵՒ ԵՍ

Մահը դաշինք է կնքեր
Հետս կարծես ակամայ,
Կ'ուզէ ըլլալ ինձ ընկեր
Շուքի մը պէս մշտական:

Ժամագրողութիւն ունի ան
Հետս բռնի՛, անդադար,
Եւ ամէն ժամ ու վայրկեան
Խօսիլ կ'ուզէ անբարբառ:

Կը նախանձի քայլերուս,
ինծմէ առաջ կը վազէ,
մէ ցոյց կուտայ խոր, անլոյս
Վիշէր, փոսեր աւազէ:

Ֆիլատելիա, 12 Ապրիլ 1944

Ու կը սպառնայ ինծի միշտ՝
Սիրով խնդայ սիրտըս երբ,
Ու պատճառեւ կ'ուզէ վիշտ
Զարուծիւնով դաւածեմի:

Ան կ'ուզէ որ լուռ մընամ՝
Յոյսին երես դարձուցած,
Եւ օրերս իմ լուսածամ,
Դառնան կսկիծ, աղէտ, լաց:

Բայց ես ճամբասս կը քաշեմ
Գոհ, անտաքբեր ու անվախ,
Մահէս յետոյ՝ զի գիտեմ
Կ'ապրին երգերն իմ խիղախ:

Հ. ՄԻՔԱՅԵԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՃԱՐ

Խաչապըսակ կամար կամար
Անդերու մէջ սարերն ի վեր.
Կը բարձրանան ոսկէկառար
Հայրենիքիս լոյս տաճարներ:

Ճամբայ մը լուռ կը գալարուի
Քաղքին մէջէն ծորան ծորան,
Կը կորսուի ու կը բացուի
Առջեւ ժամու մը հայկական:

Կանաչ կարմիր սարի կողքն
Արահեա մը վար կը քակուի,
Հոն լրուութեան մէջ հոյաշէն
Մարմար տաճար մը կը բացուի:

Վերն ամեհի Ժայռի կուրծքին
Հիւղեր քովէ քով կը շարուին .
Փայտէ տընակ, խաչ մը ճակտին
Ահա տաճարն հայ գիւղակին :

Զինակատար ամպերն ի վեր
Կը թափառի գիծ մը լայնշի.
Ան հայրերուս ճամբան է գեռ,
Երբ մոմերով ուխտի գացին:

Կը հեղեղի լոյս մը այգուն
Ուսերն է վար կատարներուն,
Հազար կայծեր կը բռնրնկին
Լուսաւորչի տաճարն հանդոյն:

Խաչապըսակ կամար կամար
Դաշտերուն մէջ սարերն ի վեր,
Կը կոթողուին լուսակատար
Հայրենիքի բիւր տաճարներ:

Աղեքսանգրիա
24 - 10 - 43

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ.

ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆ-ԷՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՃ
ՃԱՆՁՑՈՒԱԾ ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐ. — Հրա-
տարակուած է «Հայկական Նորալիկեր» ամս-
դասի տակ հաւաքածոյ մը հայ գրողներէն:
Գործերէն՝ Թարգմանուած ռուսերէնի: Կը պա-
րունակէ արեւելահայ և արեւմտահայ գրագէտ-
ներէն ընտրուած քառասուն պատմուածքներ
հետեւեալ հեղինակներէն՝ Գրիգոր Զօհրապ, Յա-
կոբ Պարոնեան, Երուանդ Ստեան, Ռուբէն
Զարգարեան, Երուխան, Յովհաննէս Թումա-
նեան, Նիւրմանզագէ, Նարդոս, Դերենիկ Դե-
միրճեան, Ստեփան Զօրեան: Այս հաւաքածոյի
մասին ռուս գրագէտ մը՝ Խերսոնսկի, մեծ
գովեստով կը խօսի ներկայացնելով զայն ռուս
հասարակութեան, կը շեշտէ մանաւանդ Սովե-
տական Հայաստանի մէջ վերջերս երեւան եկած
յայտնի գէմքերը, գլխաւորապէս Սո. Զօրեանը՝
եր «Սպիտակ քաղաք»-ին մէջ, և Դ. Դեմիր-
ճեանը՝ Ժողովրդական կեանքէ առած նոր
վէպերուն և «Վարդանանք» մեծ պատմական
վէպին մէջ:

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ 2000-ամեակը. — Երեւանի
մէջ տօնախմբուած է այս տարւոյն ընթացքին
հայ թատրոնի 2000-ամեակը: Այս առթիւ ա-
պացուցուած է որ հայ թատրոնը ամենահինն է
բովանդակ Սովետական Միութեան ազգերու
հնագոյն պատմութեան մէջ: Եւ ստուգիւ ըստ
արձանագրութիւններու Հայաստանի մէջ առա-
ջին թատրոնը կառուցուած է Տեգրանակերտի
մէջ 69-ին Քրիստոսէ առաջ, և երկրորդ մը
53-ին Արտաշատի մէջ, ուր բեմագրուած
է Եւրիպիդեսի «Քրմանոյնները» ողբերգու-
թիւնը: Ներկայիս Արտաշատի շրջակայքը
սկսած են վերակառուցանել հինաւուրց ամփի-
թատրոնը, և ուր 1947-ին ծրագրուած է ներ-
կայացնել «Քրմանոյնները»:

Տ. ԶՈՒՀԱՃԵԱՆԻ ԱՐՇԱԿ Բ.Ը — ԵՐԵՎԱՆԻ
ԱԿԵՆԴԻԱՐԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՊԷՄ. ՕՐԵՐԱՅԻՆ ՄԷՋ
ԲԵՄԱԳՐՈՒՄԸ Է ՆՅԱՆԱՐՈՐ ՏԻԳՐԱՆ ԶՈՒՀԱՆ

Ճեանի Արշակ Բ. Թատրերգութիւնը մեծ յա-
ջողութեամբ, որ 1868-ին Պոլսոյ մէջ, Նստումի
Թատրոնի բեմին վրայ ներկայացուած էր առա-
ջին անգամ ղեկավարութեամբ երգչախանի:

ԺԹ դարու կեսուն հայ երաժշտութեան մեծագոյն ներկայացուցիչն է ան և հայկ. օբերայի հիմնադիր. իր գործերն են նաեւ *Զովորի օբերան* (1891), *Սրիֆ* (1872), «*Քէօսա Քէհեա*» (1874) և «*Լեւեւեւի շօրօր Աղա*» երեք օբերէթները: Իտալական մամուլը անուանած էր զինքը «*Իլ վերտի Արմենօ*» (Հայ վերտի): — Տ. Զուհաճեան ծնած է 1837 և մեռած 1898-ին:

ՄԱԿՍԻՄ ԿՈՐԲԻՒ ՄԱՀՈՒՆ 10-ամեակին Սով. Միութեան զանազան քաղաքներու մէջ տեղի ունեցած են գրական հովամբներ, հաւաքոյթներ վերադնահատելու համար մեծ գրադէտին արժանիքը: Սով. Միութեան ազգերու լեզուներով բեմադրուած են անոր թատերալեզուներով բեմադրուած են «Զեքովե-խաղերը, այսպէս «Թշնամիները», «Զեքովե-լը», «Արեւի աղաքը» և այլն: Մաքսիմ Կոր-բու», «Արեւի աղաքը» և այլն: Մաքսիմ Կոր-բուի գործերը շատ սիրուած և կարգացուած են Սով. Միութեան ժողովուրդներու քով: Թարգմանուած են բազմաթիւ լեզուներու: Անոր «Մայրը» վեպը 106 անգամ հրատարակուած է, «Մանկութիւնը» 77 անգամ: Փարիզի մէջ՝ 25 Յունիսին Փէյէլէ Սրահին մէջ Ժ. Ռիշար Պլօք խօսած է հո՞ծ բազմու-թեան մը առջեւ մեծ գրադէտին վրայ՝ ցոյց տալով անոր բացառիկ արժանիքը:

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ
25-ամեակը. — Մեծ հանգիստաւորութեամբ ու-
նախաբերած է Երեւանի մէջ Պետական Համա-
լսարանի 25-ամեակը՝ գիտական-գրական նիս-
տերով Ապրիլի 22-26-ին: Առաջին նիստին խօսք
առած էն ակադեմիական Յ. Մանանդեան և Վ.
Համբարձումեան: Ներկայ եղած էն ուրիշ ա-
կադեմիականներ, փրոֆէսորներ և գիտահե-
տազօտական Հաստատութեան աշխատողներ և
ուսանողներ:

ԽՈՒՆԵԱԹԵԱՆ ԲԱՅԱԾ Է ՆԻՍՏՈՂՆԵՐ՝
 ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՈՐԷՆ - ՎԱՐԻՋ ՀՐԱՋԵԱՅ
 ԲՈՒՆԵԱԹԵԱՆ ԲԱՅԱԾ Է ՆԻՍՏՈՂՆԵՐ՝